ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

01/18/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Լյուդմիլա Հովսեփյանը, Արամ Քոչարյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանհամայնքիավագանու 2022թ. հունվարի 18-ի նիստի օրակարգը հաստատելու մասին
2.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու մասին

3.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին

4.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղի գյուղապետարանի աշխատակազմ» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալովի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեության դադարեցման մասին:

5.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու
6. Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին

7.Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանհամայնքի2022 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը հաստատելումասին
9. Թումանյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքայինոչ առևտրային կազմակերպություններիաշխատակիցներիթվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>

N 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
10. Թումանյանհամայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին
11. Թումանյանհամայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին
12. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին
13. Թումանյան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշելու մասին

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝

Թումանյան համայնքի ավագանին ո ր ո շ ում է.

1. Հիմնադրել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:
2. Թումանյան համայնքի ղեկավարին՝ հիմնարկը հաշվառելու նպատակով մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ա/

Լսեցին
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 23 -ի <<Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 4-Ա որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ համայնքի ավագանու 1997 թվականի փետրվարի 3 -ի <<Դսեղի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին>>թիվ 3 -Ա որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալով համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 25-ի <<Չկալովի գյուղապետարանի աշխատակազմի>>համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը թիվ 7-Ա որոշումը.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Լսեցին
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՉԿԱԼՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

«Պետականկառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Դադարեցնել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղի գյուղապետարանի աշխատակազմ» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալովի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային կառավարչական հիմնարկների գույքը «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին հանձնելու և հաշվեկշռում հաշվառելու ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1 Հաստատել «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով և հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13 և 14 հոդվածներով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքում հանրայինբացլսումներիև (կամ) քննարկումներիկազմակերպման ևանցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի, 37-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների,
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան,
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը,
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի № 1148-Ն որոշումը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ գլուխների պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. 2022 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի /այսուհետ՝ նաև Համայնք/ վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

2. Սահմանել, որտեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվեն էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

3. Ուժը կորցրած ճանաչել՝
1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 06-ի « ՀՀ

Լոռու մարզի Թումանան համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին». N 49-Ն որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի « ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին» N 61-Ն որոշումը:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 04-ի « ՀՀ Լոռու մարզի Չկալով համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին» N 28-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ն/
Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-
րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքա ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-6 հավելվածների:
2.Ուժը կորցրած ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքային ոչ
առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 11-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել 2020 թվականի Թումանյան համայնքի բյուջեի նախագիծը՝

1) եկամուտների գծով՝ 308675,2 հազար դրամ,ա

2) ծախսերի գծով՝ 355499,525 հազար դրամ,

3) դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ՝ 46821,325 հազար դրամ:

2. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):

3. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեիծախսերը ըստ գործառնական

դասակարգման՝ (հատված 2):

4. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի ծախսերը ըստ տնտեսագիտական

դասակարգման՝ (հատված 3):

5. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝(հատված 4):

6. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեիդեֆիցիտի (պակասուրդի)՝ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝(հատված 5):

7. Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեիծախսերը ըստ գործառնական

և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):

8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀօրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15%ը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ն/
Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

1) Հանձնաժողովի նախագահ՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան-Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
2)Հանձնաժողովի անդամ՝ Գնել Գագիկի Քոչարյան-Թումանյան համայնքի ղեկավարի օգնական
3)----//---- Լյուդմիլա Սարիբեկի Հովսեփյան -ավագանու անդամ
4)----//---- Մարիամ Սարգսի Էիտիբարյան - Դսեղի առողջության կենտրոնի տնօրեն
5)---//---- Էդուարդ Ռազմիկի Շեկոյան - Դսեղի միջնակարգ դպրոցի տնօրեն
6)----//---- Գառնիկ Անդրանիկի Հովսեփյան - Դսեղ բնակավայրի վարչական ղեկավար
7)----//---- Ստեփան Արտեմի Վարոսյան - Թումանյանի առողջության կենտրոնի տնօրեն

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Համայնքայի ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամներից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել 3
և ընդգրկել հետևյալ ավագանու անդամներին.

1) Շաքարյան Ռոման Ռոբերտի
2) Վանյան Հրանուշ Դավթի
3)Խաչիկյան Գոհարիկ Սարգսի

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի ավագանու նստաշրջանի օրը ժամը սահմանել 2022 թվականի փետրվարի 18-ը, ժամը 12:00:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻԿԱԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԵԳԱՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ

ԿԱՐՈ ՂԱՋԱՐՅԱՆ

ԷԴԳԱՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՎԱՀԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՎԱՆՅԱՆ

ՀՐԱՆՈՒՇ ՎԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ_____
Նիստն արձանագրեց՝ Ռուզաննա Շահվերդյանը _____